

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

1988 թ. հունիսի 3-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի դահլիճում, բարձր նախագահությամբ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի, տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 1987—88 ուսումնական տարվա ամավերջի հանդեսը:

Միաբերան արտասանված Տերունական աղոթքից հետո հնչեց Հայաստանի պետական հիմնը, ապա աշակերտները մեծ ոգևորությամբ կատարեցին հոգևոր ճեմարանի քայլերգը:

Բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի ընդհանուր դաստիարակ Սեպուհ աբղ. Զուլչյանը:

Ապա ճեմարանի սաները երգեցին Մովսես Խորենացու և Ներսես Շնորհալու շարականներից, որից հետո ուսանողության անունից շնորհակալական խոսք ասաց շրջանավարտ Սարգիս սրկ. Ղանդիլյանը:

«Վեհափառ Տեր, տիար Ստեփան Վարդանյան, գերաշնորհ սրբազան հայրեր, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, սիրելի դասախոսներ, ուսանող եղբայրներ և ներկաներ:

Հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճը այսօր լեփ-լեցուն է հավատավոր բազմությամբ: Օրը պայծառ է ու արևոտ: Պահը ուրախալի է և միաժամանակ հուզումնալից, հատկապես մեզ համար:

Այո՛, մենք հուզվում ենք, տխուր է մեր հոգին: Մենք՝ հինգերորդ լսարանի ութ սարկավագներս, հրաժեշտ ենք տալիս այս նվիրական ու հոգեհարազատ հաստատությանը: Բազում հիշողություններ մնացին մեզ հետ, որոնք կօգնեն, որ մեր ապագա կյանքը ճիշտ ապրենք: Մենք թրծվեցինք, կոփվեցինք և հմտացանք գիտությունների մեջ: Դուք, սիրելի դասախոսներ, հագեցրիք մեր հոգևոր և մտավոր ծարավը, անխոնջ աշխատանքով առողջ սերմեր ցանեցիք մեր հոգիներում, որոնք կծլարձակեն, կաճեն ու կտան առողջ պտուղներ:

Եվ ահա եկել է ժամը հատուցման ու հաշվետվության: Դուք պահանջում եք. «Տուր զհաշիվ տնտեսության քո»: Եվ ես վստահեցնում եմ, որ Դուք հուսախաբ չեք լինի մեզանից, կանենք կարելին՝ Ձեր հույսերը արդարացնելու համար, մեզ վրա դրած պարտականությունները կկատարենք նվիրումով, ի շահ մեր քաջարի ժողովրդի և Եկեղեցու բարգավաճման:

Նորին Սուրբ Օծությունը մեզ սովորեցրեց լինել հավատավոր, ունենալ անկոտրում կամք, հարատև վճռականություն և հույս՝ ապագայի նկատմամբ: Նորին Սրբությունը Իր անձնական օրինակով դարձավ մեր բոլորի ոգևորող, խանդավառող ու վերականգնեցնող ուժը: Մենք սովորեցինք Նրանից աշխատասիրություն, անկեղծ

հավատ ու սեր, Նա մեզ սովորեցրեց ընկալելու և ընտրելու լավն ու բարին, ներեց մեր հասակի անհարկի ու անվայել արարքները:

Հանուն Ե լսարանի ութ շրջանավարտների, գոհունակություն ու երախտագիտություն ենք հայտնում Վեհափառ Հայրապետին, որը թեև բազմազբաղ՝ բայց կարողացավ կրթել մեր հոգիները:

Նաև գոհունակության խոսք ունենք ասելու Մայր տաճարի լուսարարապետ, գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանին, որն իր անձնական օրինակով մեր մեջ ներարկեց նախ երկյուղ աստվածային և ապա՝ հարգանք սրբությունների նկատմամբ:

Ահա մենք այս խորհրդածություններով, հույսերով ու ապրումներով բաժանվում ենք Ձեզանից, մեզ սնուցող ուսուցիչներ:

Վեհափառ Տեր, այս գիտակցությամբ ուսանողության անունից մաղթում եմ Ձեզ արևշատություն ե երկար տարիների բեղմնավոր, հայրենասիրական գործունեություն:

Թույլ տվեք համբուրել Ձեր Ս. Աջը և ստանալ Ձեր հայրական օրհնությունները»:

Հետո հնչեցին Արամ Խաչատրյանի դաշնամուրային երկու մանրանվագներ, որոնց հաջորդեցին Թումանյանի, Վարուժանի և Թեքեյանի բանաստեղծությունների արտասանությունները, ասլա և հայրենասիրական երգեր:

Հուսկ հետո տարեկան հաշվետու խոսքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը.

«Ավարտին հասավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1987—88 ուստարին՝ աշխատանքային եռուզեռով լեցուն, արդյունավետ, հուզումնալից մի տարի:

Այսօր հոգևոր ճեմարանը այս հանդիսավոր պահին ավարտում է անցնող ուսումնական տարվա աշխատանքները՝ միաժամանակ սրտատրոփ սպասելով նոր ուսումնական տարվան, ավարտելու այն ծրագրերը, որ չհաջողեց անել այս տարի և գործի դնելու նորանոր այլ ծրագրեր:

Այժմ, թույլ տվեք, սեղմ գծերով ներկայացնել հոգևոր ճեմարանի գործունեության պատկերը անցնող տարվա ընթացքում:

Տեսչական կազմ

Հոգևոր ճեմարանի տեսչական կազմն է՝
Տեսուչ՝ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյան.
Ավագ դաստիարակ՝ Տ. Սեպուհ աբդ. Զուլչյան.
Դաստիարակներ՝ Տ. Միքայել աբդ. Աջապահյան,
պրն. Վաչագան Հովհաննիսյան.
Քարտուղար՝ պրն. Արմեն Հովսեփյան:

Գնահատանքի արժանի է հայր Սեպուհ Զուլչյանի նվիրված աշխատանքը, որը իր գործակիցների օգնությամբ կարողացավ բարձր հիմքերի վրա դնել հոգևոր ճեմարանի կարգապահությունը:

Դասախոսական կազմ

Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, արեց իր կարելին՝ ուսանողների դաստիարակության համար:

Նախկին դասախոսների կողքին այս տարի հրավիրվեցին դասավանդելու բանասիրական գիտ. թեկնածու պրն. Գևորգ Բաղդիշյանը (գրաբար), բանասիրական գիտ. թեկնածու պրն. Արմեն Տեր-Ստեփանյանը (Հայ Եկեղեցու պատմություն), Տ. Աբրահամ աբդ. Մկրտչյանը (Վարք սրբոց), Տ. Սեպուհ աբդ. Զուլչյանը (տոնագիտություն) և Տ. Սերովբե աբդ. Իսախանյանը (Պատմություն Նոր Ուխտի):

Ուսանողություն

Հոգևոր ճեմարանը այս տարի ունեցավ 5 դասարաններ՝ նախապատրաստական, Ա, Գ, Դ, Ե:

Ուսումնական տարին սկսել ենք 35 ուսանողներով:

Նոյեմբերի վերջին ունեցանք ևս 5 ուսանող սիյուռքից:

Ուսումնական տարին փակում ենք 32 ուսանողներով: 3 հոգի մեկնել են բանակ: Այլևայլ պատճառներով հեռացել և հեռացվել են 5 ուսանող:

Հոգևոր ճեմարանի հունձքը

Հոգևոր ճեմարանի հիմնական նպատակն է արժանավոր հոգևորականներ պատրաստել Հայ Եկեղեցու համար:

Այս տարի նույնպես հոգևոր ճեմարանը կատարեց իր պարտականությունը:

1988 թ. մարտի 10-ին 7 շրջանավարտներ հաջողությամբ պաշտպանեցին իրենց դիպլոմային աշխատանքները և ստացան ճեմարանի դիպլոմ: Նրանցից չորսը երկու շաբաթ առաջ ստացան քահանայական ձեռնադրություն՝ 3-ը կուսակրոն, 1-ը՝ ամուսնացյալ:

1988 թ. մայիսի 12-ին, Համբարձման տոնին, այս ուսումնական տարվա ավարտական դասարանի 8 սաներ ստացան սարկավագական ձեռնադրություն: Հնգամյա դասընթացն ավարտելով, նրանց արդեն հանձնարարված է պատրաստել դիպլոմային աշխատանքներ՝ զանազան թեմաներով:

Ուսումնա-գիտական գործունեություն

Հոգևոր ճեմարանում տեղի ունեցած աշխատանքներից ցանկանում եմ հիշել 3-ը:

ա. Ուսումնական խորհրդի աշխատանքներ.

Վեհափառ Հայրապետի բարեհաճ հաստատումով այս տարի հոգևոր ճեմարանն ունեցավ չորս անդամից բաղկացած Ուսումնական խորհուրդ (Տ. Եզնիկ քհն. Պետրոսյան, Երվանդ Գրիգորյան, Երվանդ Մելքոնյան, Արմեն Տեր-Ստեփանյան): Տարվա ընթացքում Ուսումնական խորհուրդը բազմիցս զբաղվեց ճեմարանի ուսումնական ծրագրի հետ կապված զանազան հարցերով, քննարկեց, խմբագրեց մի շարք դասագրքեր, ինչպես, օրինակ, ընդհանուր գրականության պատմություն, հայ ժողովրդի պատմություն, հայ արվեստի պատմություն, ձեռագրագիտություն, հնագրություն, Հայ Եկեղեցու պատմություն և այլն:

բ. Հոգևոր ճեմարանի՝ Հովհաննավանքից Ս. Էջմիածին փոխադրության 350-ամյակին նվիրված գիտական նստաշրջան:

Ինչպես հայտնի է, 1990 թ. Մայր Աթոռում նշվելու է հոգևոր ճեմարանի 350-ամյակը: Այս հանդիսության իբրև նախապատրաստություն, ս/թ. մարտի 16—18-ին հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, հոգևոր ճեմարանի և, ինչու չէ նաև՝ Մայր Աթոռի պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցավ գիտական նստաշրջան, որը նպատակ ուներ մեջտեղ բերել հոգևոր ճեմարանի ուսուցիչ կամ սան եղած անծանոթ գրական-գիտական-եկեղեցական դեմքեր, ինչպես, օրինակ, Մելիքսեթ Վժանեցին (ԺԷ դ.), Պետրոս Քյութուրը (1749), Պետրոս Բերդումյանը (1787), Զաքարիա Գուլասպյանցը (ԺԹ դ), Հովհաննես Շահխաթունյանցը (1849), Աբել Մխիթարյանցը և այլն:

Գիտաժողովին ելույթներով հանդես եկան նաև Լենինգրադի և Մցխեթի հոգևոր ճեմարանների ներկայացուցիչները:

գ. Ռուսաստանի մկրտության 1000-ամյակին նվիրված գիտական նստաշրջան Մայր Աթոռում, որին իր մասնակցությունը բերեց նաև հոգևոր ճեմարանը:

Այս ամենը, անկասկած, հարստացրին անցնող ուստարին»:

Ապա տեղի ունեցավ մրցանակաբաշխություն: Ուսման հառաջադիմության, կարգապահության, բարի վարք ու բարքի, եկեղեցասիրության և այլ առաքինությունների համար աչքի ընկնող ուսանողները Վեհափառ Հայրապետի ձեռքից ստացան իրենց նվերները:

Բարձր տրամադրության մեջ Նորին Սրբությունը ներկաներին և ուսանողներին բաշխեց Իր հայրապետական օրհնությունները:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՃԵՄԱՐԱՆԻ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

Ինչպես ամեն տարի, նաև այսօր ես գոհունակ սրտով ներկա եմ հոգևոր ճեմարանի հարկի տակ ուսումնական տարեշրջանի փակման հանդիսության: Անշուշտ իմ առաջին պարտականությունն եմ նկատում իմ գնահատանքի և օրհնության խոսքը բերել ճեմարանի տեսչության և պաշտոնեության: Իմ գնահատանքի և օրհնության խոսքը նաև հոգևոր ճեմարանի հոգևորական և աշխարհական դասախոսներին, որոնք մի ամբողջ տարի կարելին ի գործ դրեցին, որպեսզի մեր սաները բավարար չափով ստանան և՛ գիտելիքներ, և՛ ընդհանուր զարգացում, և՛ ոգեշնչվեն այն գաղափարներով, հոգևոր և ազգային իդեալներով, որոնք հիմքն են կազմում այս պատմական հոգևոր հաստատության, որ այսօր կոչվում է հոգևոր ճեմարան:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ըմբռնումով, դարեր շարունակ այս հարկի տակ միաձուլվել են՝ հոգևորը, մշակութայինը, բարոյականը և ազգայինը: Դա երջանիկ զուգակցություն է, որ մենք պետք է սրբությամբ պահպանենք և է՛լ ավելի զարգացնենք, է՛լ ավելի ցայտուն դարձնենք մեր կյանքում, որպեսզի նաև ապագայի շրջանավարտ սաները, ապագա հոգևորականները արտահայտիչները լինեն այդ արժեքների միասնությանը: Այս տարի, մարտ ամսվա սկիզբներին էր, ես մի նոր փորձառություն ունեցա, ինչ որ ինձ խորունկ հուզում պատճառեց և հոգեկան մխիթարություն: Քարոզխոսության դասին էին եկել 5-րդ լսարանի սաները, թվով ութ սարկավագներ: Դասը սկսվելուց առաջ ուսանողներից մեկը ոտքի կանգնեց և հանդիսավորությամբ, տխուր դեմքով ակնարկեց Սումգայիթի զոհյալներին և ինձ ցավակցություն հայտնեց, պատշաճ մի քանի խորհրդածություններով, հարազատ հայու ապրումներով: Սա մի անգամ ևս ցույց է տալիս, որ մեր հոգևոր ճեմարանի հարկի տակ լուրջ աշխատանք է տարվում և դարբընվում են հայ երիտասարդ ոգիներ, որ կոչվելու են մոտ ապագային ծառայելու մեր Եկեղեցուն և մեր ժողովրդին: Այս մասին ես պարտական զգացի արտահայտվել այսօր՝ նախ իմ գոհունակությունը հայտնելու

համար, որ մեր ուսանողները ինքնաբերաբար, առանց ուրիշից թելադրվելու, մտածել էին հանուն ճեմարանի ուսանողության ցավակցական իրենց խոսքը հասցնել կաթողիկոսին, և երկրորդ, ցանկանում էի այս պահը հիշել, մի անգամ ես ոգեկոչելու համար նվիրական հիշատակը Սումգայիթում զոհված հայերի:

Մաղթում եմ, որ, սիրելի սաներ, մանավանդ դուք, որ երկու ամիս արձակուրդ ունեք, լավ հանգստանաք, այդ ձեր հանգստի շրջանին էլ չբաժնվեք գրքից, կարդաք հատկապես սովետահայ գրականությունը, որի մեջ արտացոլվում է արդի կենդանի հայ լեզուն: Դասախոսներին էլ նույնպես բարի մաղթանքներ, մնան քաջառողջ՝ հոգով և մարմնով, և վերանորոգված և նոր ոգեշնչումով գան այստեղ, մեզ հետ միասին բանողու հոգևոր ճեմարանի դռները 1988—89 տարեշրջանի համար: Այս առիթով ես կուզեի նաև իմ շնորհակալությունը հայտնել մեր պետական իշխանությանց ներկայացուցիչներին՝ պրն. Վարդանյանին, որ տարվա ընթացքին ուշադիր և հոգատար եղավ հոգևոր ճեմարանի նկատմամբ, և ընդհանրապես Մայր Աթոռի նկատմամբ: Մեր երկրում, ինչպես գիտեք, վերանորոգման նոր շրջան է սկսվել՝ ռուսերեն բառով «պերեստրոյկա»: Սա միայն խոսք չէ, այլ նաև իրական, ճշմարիտ ցանկություն, և այս ճանապարհի վրա լինելու են բարեկարգումներ նաև պետության և Եկեղեցու հարաբերությունների միջև: Պետության կողմից այս նոր, ավելի բարյացակամությունը և հարգանքը դեպի Եկեղեցին, մեզ ավելի է պարտավորեցնում, որպեսզի մենք էլ գիտենանք մեր պարտքը կատարել և՛ մեր ժողովրդի, և՛ մեր Եկեղեցու, և՛ մեր հայրենիքի, և՛ պետության հանդեպ: Թող Աստված օրհնի մեր ողջ հայրենիքը, հայ ժողովուրդը և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և հոգևոր ճեմարանը. ամեն:

Հանդիսությունը փակվեց՝ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ԹՂԹԱԿԻՑ